լոր տեսակի հարկերից ու տուրքերից, որպէս-զի «մեր կրօնաւորները կերակրի եւ հագստի պակասութիւն չքաշեն» (ԺԱ)։ Կամ՝ մինչդեռ այլ կրօնափոխների մասին ոչ մի խօսք, բայց մի յատուկ օրէնքով մահուան պատիժ է սահմանում այն հայ Լուսաւորչականի համար, որ կ'ուրանայ իր հաւատը (Զ)։

Ճիշդ է, թէեւ օտար դաւանութիւններին էլ նա կատարեալ ազատութիւն է տալիս եւ պահանջում է, որ ոչ ոք չհամարձակուի արգիլել ոչ-Լուսաւորչականին իր դաւանութեան վրայ մնալ (Ե, ճիը), սակայն կասկած չկայ, որ նրանք Լուսաւորչական եկեղեցու առանձնաշնորհեալ վիճակը չունին։ Բաւական է, որ ոչ-Լուսաւորչականը չի կարող որեւէ բարձր պետական պաշտօն ստանալ, անգամ եթէ նա քրիստոնեայ է. «Մի ոք հաւատացելոց ի Քրիստոս այլ աղանդաւ գոցի պաշտօն ի տանէն հայոց, բայց աւանդութեամբ սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեաց» — ասում է 205 օրէնքը։

Հասկանալի է, որ ԺԸ. դարում ապրող մի Ջերմեռանդ եւ հայրենասէր Հնդկահայ վաճառականից — ինչպիսին է Յ. Շահամիրեանը — չէր կարելի պահանջել, որ նա հաւասար վերաբերմունք ունենար իր հայրենիքում ապրող բոլոր ազգութիւնների եւ բոլոր կրօնների հանդէպ։ Ներկայումս անգամ, երբ համամարդկային գաղափարներն այնքան տիրական են ու զօրեղ, երբ ազգութիւնների եւ մանաւանդ կրօնների միջեւ եղած հակամարտութիւնն ու թշնամանքը — ըստ երեւոյթին — այնքան թուլացած են, այնուամենայնիւ սակաւաթիւ բացառութիւնները միայն կարող են ազատագրուած նկատուել ազգային — չենք ասում՝ ազգայնական — եւ կրօնական ազդեցութիւններից։

Եւ Շահամիրեանի նման մէկը, որի հայրենիքում դարերով նստած մահմեդական ժողովուրդները բռնութեան ու վայրենութեան մարմնացումն են հանդիսանում, ի՞նչպէս կարող էր հաւասար աչքով նայել երկրի ազգաբնակութեան ուղիղ կէսը կազմող մահմեդականութեան վրայ եւ նրանց էլ նոյն իրաւունքները տալ, ինչ որ հայերին։

Եթէ դա չտեսնէին կարող է ազգայնամոլութիւն կամ կրօնամոլութիւն երեւալ, բայց յամենայն դէպս ունի իր արդարացուցիչ պատճառները, մանաւանդ այն ժամանակների տեսակէտից.—

Ամենից առաջ՝ այն արդար ատելութիւնը, որ մեր հեղինակը տանում է դէպի մեր ժողովրդի դժբախտութեան աղբիւրը հանդիսացող եւ Հայաստանը իրենց կրունկների տակ տրորող մահմեդականները։

Երկրորդ՝ այն վախը, որ նա բնականաբար զգում էր իր սրտի մէջ. եթէ հայ ժողովրդին իր թուովը հաւասար, բայց իր տնտեսական, ռազմական, ֆիզիկական եւ իշխելու կարողութիւններովը նրանից շատ բարձր մահմեդականութեան եւս նոյն իրաւունքները տրուէին, այդ դէպքում հայ ժողովուրդը ո՛չ թէ կ'ազատագրուէր օտարի լծից եւ կը լինէր իր երկրի տէրը, այլ նորից մահմեդականութեան լուծը կը մնար նրա վզին, բայց այս անգամ արդէն օրինական ճանապարհով հաստատուած։

Եւ վերջապէս երրորդ՝ նա շատ լաւ գիտէր, որ նման պայմաններում, իրականութեան մէջ, եւ ոչ մէկ ժողովուրդ չէր կարող այլ կերպ վարուել։ Նա իր աչքերով տեսնում էր, որ հայերից անհամեմատ հզօր եւ լուսաւոր անդլիացին գլխաւորարար մի շարք արտօնութիւնների եւ բացառիկ իրաւունքների շնորհիւ է, որ իր գերիշխանութիւնը պահպանում է Հնդկաստանում։

Հետեւապէս ինչո՞ւ միայն հայն ու Հայաստանը պիտի բացառութիւն կազմէին։

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ազգային ժողով կամ պարլամենտ

Շահամիրեանի Հայաստանը ռամկավար հանրապետական երկիր է։ Ժողովուրդն է, հայ-լուսաւորչական ժողովուրդը, առանց ծագման եւ դասակարգի խտրութեան, երկրի բարձրագոյն տէրը եւ իշխանութեան աղբիւրը։ Ժողովուրդն է օրէնքներ տալիս եւ կառավարում երկիրը իր ներկայացուցիչների միջոցով։ Իւրաքանչիւր հայ-լուսաւորչական տղամարդ ներկայացուցիչների ընտրութեան մէջ քուէ ունի եւ կարող է ե՛ւ ընտրել, ե՛ւ ըն-